ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

ք. Երևան Աջափնյակ, Մարգարյան 35
հեռ. /094/ 591-598 /055/ 61-89-10
,, 09 ,, հոկտեմբեր 2014թ.

Հարգելի գործընկերներ

Առաջարկում ենք 7/յոթ/ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել հավելված 1-ում /տեխնիկական բնութագիր/ ներկայացված հանդերձանքի համար Ձեր կազմակերպության գնային առաջարկը **ՆՇՀԱՋԲ-ԱԵՍՀԿ-11/10-14** ծածկագրով մրցութային հանձնաժողովին:

Գնային առաջարկի փաթեթը պետք է կազմված լինի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի պահանջներին համապատասխան և պետք է պարունակի «Հայտարարություն մասնակցի որակավորման չափանիշներին համապատասխանության մասին», «Գնի առաջարկ» փաստաթղթերը, որոնք պետք է կազմված լինեն *1 բնօրինակից և թվով 2/երկու/ պատճեններից:*

Գնային առաջարկի փաթեթը կարող եք ներկայացնել մինչև 2014 թվականի հոկտեմբերի 21-ի ժամը 12:00-ն` ք Երևան, Մարգարյան 35 հասցեով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը, պահանջվող ապրանքների տեխնիկական բնութագիրը /հավելված 1/, գնման և վճարման ժամանակացույցերը /հավելված 2 և 3/, հանձնման-ընդունման ակտի /հավելված 4/ մեկական օրինակ, շահառու-երեխաների սեռատարիքային կազմի ցանկը և ներկայացվելիք Հավելված 5-ի և 5.1-ի օրինակելի ձևերը:

Առդիր` 12 էջ:

Տնօրեն Ս. Ղալթախչյան

Կատարող` Վ. Հարությունյան
հեռ. /094/ 591-598, /055/ 61-89-10